

կան երգերից, այլ իւր աղբիւրի հեղինակն է ճարտասանօրէն մշակել ժողովրդական բանաստեղծութիւնը: Երգերի յիշատակութիւնը նա իւր աղբիւրից է առել:

Թէ իրօք պատմական երգերի վրայ է հիմնուած այդ պատմութիւնը, այդ աներկրայ ցոյց կտայ մեզ անոր բովանդակութեան ուսումնասիրութիւնը:

(Եւրո-նալի)

Մ. Արեղնան.

ՄԱՆՐԱԼՈՒՐԷ

Ձիւնացիներն ինչ են ուտում և ինչով թոշխուում.— Ձիւնացիներն նա մանաւանդ չինացի չքաւորը: առանձին խորութիւն չի դնում ուտելիքների մէջ, ուտում է համարեա այն ամէնը, ինչ մարսել կարող է մարդու ստամոքսը: Այն բոլորը, որից երես կդարձնէր նոյն իսկ սովամահ լացարոնին (աղքատ խալացի), չինացի հարուստը իբրեւ մի հազուադիւս իր կընդունի:

Պանտոնում, օրինակի համար, ծախում են մսացու շներ, որոնց միւր կերակրի մէջ են գործածում. կան խառնութիւններ, որտեղ կատուի միս են վաճառում և վերջապէս նոյն իսկ մկան միսը վաճառքի ընտիր ներթ է: Միան մից պատրաստուած յայտնի կերակուրը (pary) Պանտոնի սիրելի կերակուրներից մէկն է. կայսրութեան միւս նահանգներում այս կրծողների մից եփուած կերակուրները ճաշարանների խորտիկների ցանկի մէջ քիչ են պատահում: Պեկինի շրջակայքում աւելի շատ է տարածուած ուղտի և իշի մի գործածութիւնը, ուրիշ կենդանու միս, պէտք է ասել, դժուարութեամբ կարելի է ձեռք բերել: Տեղացի բնակիչները չեն զգուծում մինչև իսկ սատկած ուղտի և կամ իշի միսը գործադրելուց: Չեմուլպուում ճանապարհորդներից մէկը հանդիպում է մի խումբ չինացիների, որոնք նրա աչքի առաջ դուրս հանեցին գարշահոտ աղբակոյտից մի սատկած շուն և նրա մից կերակուր պատրաստեցին: Մի ուրիշ անգամ նոյն այդ ճանապարհորդը ականատես է լինում, թէ ինչպէս մի փոքրիկ գիւղի բնակիչներից շատերը թափուել էին մի մեծ խողի վրայ և պոկոտում էին նրա մազերը: Նրա տուած հարցին, թէ ինչու առաջ չեն հանում կենդանու փորտիքը և թէ այդ ինչ կապած տեղեր են նկատում:

Նրա մարմնի վրան, պատասխան ստացաւ, որ փորտիքն ու աղիքներն էլ պիտի գործադրուին. իսկ կապած տեղերը ժանտախտի նշաններն են, որից սատկել է խողը:

Ամսուն, ասում են, Ձիւնաստանի միակ քաղաքն է, որտեղ կնոջ կաթն էլ են ծախում, որը գործադրում է ծերերի սպառուած դժերը վերականգնելու համար: Պոփի կաթ խմում են միայն հիւսիսային նահանգներում. իսկ հարաւում խիստ արգելուած է: գոնէ իր բնական հեղուկ դուրսութեամբ, Բսկ մակարդած կաթի, մածնի, որի պատրաստելու եղանակը եւրոպացիներից են սովորել, մեծ պահանջ կայ: Այդ թթուաշ մակարդը, ըստ երեւոյթին, շատ է դիւր եկել չինացիներին, որոնք մեծ ակործանքով, ինչպէս մենք մեզրը, ուտում են գզալով և կամ հացով: Պանրից, որին չինացիները «փչացած կաթ» անուն են տալիս, զգուծում են, այն ինչ լակ ձուերը նորերից աւելի են գնահատում:

Kwan—Jen, այսինքն ծովի հնդկական ծիծեռնակների քները (սալանգալ, Colloca liliasculents) և ծովային լորձուտները չինական իւրաքանչիւր հանդիսաւոր խնձորի անհրաժեշտ խորտիկներն են կազմում: Այդ ծիծեռնակները դեռ կիսամարս կերակուրը փոխում են ստամոքսից և այդ մածուցիկ զանգուածը գործ են դնում իրենց քները չինելիս, իբրեւ ընտիր շաղախ բոյսերի թելիկներն իրար հետ կպցնելու համար: Այս քների մեծ մասը ձեռք է բերում Մալակկա թերակղզու ավերից, նաև Չոնգիան և հարաւային հնաւոր կղզիներից: Աչքի առաջ ունենալով, որ ծովային ծիծեռնակներն իրենց քները չինում են սեպացած ժայռերի և խոր այրերի անմատչելի տեղերում, ուստի և այդ քների հաւաքելը ծանր աշխատութիւն է պահանջում, փտանդի ենթակայ լինելով ամէն մի վայրկեանում ձեռնարկողի կեանքը: Եւ հէնց այդ է պատճառը, որ շուկաներում դրանց շատ թանկ են գնահատում, այնպէս որ ամենափառ տեսակն անգամ աղքատ դասակարգին մատչելի չէ: Հարուստ չինացիներն այս ինքն ըստ ինքեան անհամ քներն ու լուրձուտները իրենց իսկական գնից անհամեմատ աւելի են գնահատում միայն նրա համար, որ իբր թէ խիստ սնունդարար են:

Ձիւնային մաքուր ու թարմ ջուր չի խմում, փնտաւար համարելով այն: Թագաւորական մեծ ճանապարհների այս ու այն կողմերում չինուած իջևաններում գնացող եղիւներին եռքած ջուր են տալիս, իսկ լորու ծաղիկներից պատրաստուած թէյը ծառայում է իբրեւ զովարար խմիչք, որը չինացի մարդասէրները սովորաբար բաժանում են մուրացկաններին:

Ձիւնաստանում ամէն հիւանդութեան և մարմ-

նի թուլութեան միակ ընդհանրացած տեղը «Ժեն-
չէն» է (panax) ընդունուած: որը վայրի վիճա-
կում բուսնում է Մանջուրիայում և ոսկու հաւա-
սար զին ունի: այն ինչ Կորեայում մշակուող նրա
կիսավայրի տեսակը՝ արծաթի արժէք: Աւելի ար-
ժան գնով կարելի է ձեռք բերել Կալիֆորնիայի
տնկարաններից, որտեղ առանձին խնամքով մշակ-
ւում է այդ բոյսը: Այժմ ամէնից շատ «Ժեն-
չէն» Սան—Փրանցիսկոյից է ստացւում: Զինաց
կայսրը, իբրեւ առանձին շնորհ, մի մի գորուանքայ
«Ժեն—չէն» է ընծայ ուղարկում իր տէրութեան
հիւանդ բարձրաստիճան պաշտօնեաներին: Եւրո-
պացի բժիշկները խիստ կասկածանքով են վերա-
բերւում այս բժշկական բոյսի բուժիչ յատկու-
թեանց:

Մարդակազմութեան և հոգեբանութեան վե-
րաբերեալ խնդիրներում չինացիները կատարեալ
ազգետներ են, կամ գոնէ էին: քանի զեռ ի մո-
տոյ չէին ծանօթացել եւրոպացիների հետ: Այն
գիտելիքները, ինչ մինչև օրս աւանդւում է մար-
դու կազմուածքի մասին, նրանց այսպէս կոչուած
կայսերական բարձրագոյն դպրոցներում, իսկապէս
ծիծաղ են յարուցանում: Ընդ ամէնը մի քանի
տարի է միայն, ինչ մտցրել են ընդհանուր ծաղ-
կահատութիւնը: անսպի երես հազուագիւտ էր:
Ոչ մի երիտասարդ չէր համաձայնուիլ ամուսնանալ
մի օրորդի հետ: որը զեռ ծաղիկ հանած չլինէր:
Որ և է բժշկական միջոց չէր գործադրւում այս
վարակիչ հիւանդութեան առաջն առնելու համար:
որ ժողովրդական անունով «ուրախութիւն» և
կամ «ծաղկաթթութիւն» էր կոչւում: Ամենին
անկայելութիւն չէր համարւում: եթէ մէկը անծա-
նօթ մի կնոջ այսպիսի հարց տար. «Արդեօր դուք
ծաղիկ հանել էք»: Ընդհանուր ծաղկահատութիւ-
նը բաւականին թուլացրել է այդ հիւանդութեան
կործանիչ ոյժը: Հիւսիսում: Մանջուրիայում և
Մոնղոլիայում տեղացի բնակիչների մէջ, որոնք
գլխաւորապէս անասնապահութեամբ են պարա-
պուս, սե ծաղիկը միայն թոյլ կերպով է երեւո-
ցել:

Վանշաու քաղաքում պատրաստուած աչքի
դեղը ընդհանուր գործածութիւն ունի Զինաստա-
նում: Կոպրի բորբոքուած միջոցին այդ դեղը
բարերար և ամօրիչ ազդեցութիւն է անում: որխառ-
նում են մեղրի ու կաթի հետ և փայտէ ասեղի
գլխի օդնութեամբ աչքի անկիւնները լցնում:
Քոսը Զինաստանում շատ շատ է տարածուած: բայց
երկնային կայսրութեան զաւակներն այնքան էլ չեն
անհանգստանում: քորում ու քորքորում են և
այդ էլ բաւական է համարւում: Ոսրէի խցուց
և Melia Acedarach-ի պտուղներից մի տեսակ տեղ են
չինում և իբրեւ քոսի սպիղանի քսում վերբերին:
Վագրի ոսկրներն ամենամանկագին հմայք
են ընդունում: իսկ նրանց իսկականութիւնը ըս-

տուգելու համար շների առաջն են ձգում: Եթէ
նրանք կեղծ են, վագրի իսկական ոսկրներից չեն:
շներն սկսում են կրճատել: հակառակ դէպքում:
պոշները սեղմում են ու գլխապատառ փախչում:
Առանձին բուժիչ ոյժ են վերագրւում նաև այն
փոշուն: որ ստացւում է փղի ժանիքների քերուա-
ծից: Թունաւոր օձերի կծածի վտանգաւոր հե-
տեանքներից խուսափելու համար: հին, խիստ մը-
րոտած ծխամորձի միջից ջուր են ծծում ու կուլ
տալիս: Սակայն զրա հետ ի միասին գործադրւում
է վերքի ծծիւն ու այրիլը: ինչպէս և խայթուած
տեղի խնամքով կապելը: Ընդհանրապէս չինացին
օձից չի վախենում և սպանում է միայն այն դէպ-
քում, երբ յատկապէս յարձակուն է նկատում:
Զինացիներից շատերի տներում օձերն ապրում են
նրանց մշտական բնակիչների հետ, կոտորելով վը-
նասակար միջատներին: Այդ սողունները, կարծես,
բնազգամբ բմբուռնում են, որ անձեռնմխելի կմնան:
եթէ մարդու աչքին չեն երևիլ, Հենց Պեկինում
ու Նորա շրջակայքում անշափ օձեր, կարիճներ
ու հարիւր օտանիներ կան:

Թաքախտի դէմ գործ են գրւում շուշանի
գլուխները (սոխերը): իսկ սրտացաւի դէմ, ասում
են, գեղեցիկ միջոց է ճանաչուած ծովային խեց-
զեանիների փոշին: Երկրի ներսում, օբինակ: Հուն-
կինդում, որ 2000 հազարամետր ծովից հեռու է
ընկած, ծովի կենդանի խեցզեանիները շատ թանկ
են դնահատւում: ինչպէս հազուագիւտ իրեր:
նրանց համար իրենց քաղով արծաթ են վճարում:

Ի վերջոյ գնում ենք այստեղ չինական մի
դեղատոմս: որ գործադրւում է խոլերի դէմ: Լու-
ծիւր մի բաժակ բրնձի օդու մէջ 6 տրախմ (տրախ-
մը հասարակ է մօտաւորապէս 2 գրամի) Aconi-
tum variegatum, 6 տր. Carica papaya, 6 տր. Jus-
ticia, 3 տր. Convulvulus, 3 տր. Flores Cináe, 3 տր.
Glycyrrhiza glabra-ի փոշի: Այս բոլորը պէտք է եփել
մի տաներոգ լիտր ջրի մէջ և տաք տաք խմել:

* *

100-ամսայի-Ապացուցած փաստ է, որ հիւ-
սիսային երկրներում աւելի քիչ են 100 տ. մարդիկ
քան հարաւում: Աերլին վիճակագրական տեղեկու-
թիւններով Գերմանիայի 55 միլ. ժողովրդի մէջ միայն
78 ձերուներ կայ հարիւրամեայ կամ քիչ աւելի:
Ֆրանսիայի 40 միլ. ժողովրդին ընկնում է 214,
Անգղիայում 146, Հոլանդիայում 46, Շվեդիա-
յում 10, Նորվիգիայում 23, Բելգիայում 5, Իս-
պանիայում 18 միլ. ժողովրդին զալիս է 401 հոգի:
Սերբիայում 575 հոգի, թէև ժողովուրդը միայն 2 1/2
միլիոն է: Այժմ աշխարհիս ամենածեր մարդն է
Աֆրիկայում ծնուած Պորտուգալացի Բրունո Կոս-
րին, 150 տ. որ ապրում է Ռիօ Ժանէյրոյում:

